



«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Նախագծային մեթոդի կիրառում «Հայաստանի աշխարհագրություն»
առարկայի դասավանդման ընթացքում

ԱՌԱՐԿԱ

Աշխարհագրություն

ՀԵՂԻՆԱԿ

Հասմիկ Առուստամյան

ՄԱՐԶ

Շիրակի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Ամասիայի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն.....	3
1. Նախագծային մեթոդի մասին	5
2.Գործնական համատեքստում նախագծային մեթոդի կիրառում.....	17
3.Եզրակացություններ և առաջարկություններ.....	23
4.Գրականության ցանկ	25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի արդիականությունը

Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում, ժամանակի հետ փոխվում է հասարակությունը և կրթության նպատակաուղղվածությունը: Գիտելիքների յուրացումն ու մտապահումը, որոնք ավանդաբար համարվել են ուսուցման հիմնական նպատակ, այսօր վերածվել են ուսուցման հիմնական նպատակի հասնելու միջոցների: Ժամանակակից կրթության բովանդակությունը ուսումնական ծրագրերով սահանված գիտելիքների, կարողությունների, հմտությունների այն ծավալն է, այն չափը, այն նվազագույնը, որոնք պարտադիր պետք է յուրացնեն սովորողները, դրանց միջոցով ապահովեն իրենց մտավոր ու ֆիզիկական զարգացումը, ձևավորեն աշխարհահայացք, հասարակական վարք և դառնան տվյալ ժամանակաշրջանի համար հասարակության լիարժեք, ակտիվ անդամներ: Սովորողների ճանաչողական կարողությունների ձևավորումն ու զարգացումը ժամանակակից մանկավարժության կողմից դիտարկվում է որպես արդի հասարակական պահանջ և կրթության կարևոր խնդիր :

Այսօր ուսուցչի առջև խնդիրներ է ծառայած փնտրել ուղիներ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ և հետաքրքիր դարձնելու համար: Անհրաժեշտ է ընտրել այնպիսի ռազմավարություններ, որոնք կմղեն աշակերտներին նյութի յուրացման ընթացքում ինքնուրույն դիտարկումների և եզրահանգումներ անելու, վերլուծելու, համադրելու, ոչ ստանդարտ իրավիճակներում կողմնորոշվելու, նոր լուծումներ որոնելու և գտնելու, որոշումներ կայացնելու:

Ուսուցման գործընթացի կատարելագործմանը, սովորողների ակտիվացմանը, ճանաչողական կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը նպաստող մանկավարժական տեխնոլոգիաների շարքում իր ուրույն տեղն ունի «Նախագծային աշխատանքը», որը հետազոտական, պրոբլեմային, ստեղծագործական մի շարք մեթոդների և սովորողների որոշակի գործողությունների, հնարների համադրություն է, որն իրականացվում է տրված առաջադրանքը կատարելու նպատակով:

Աշխատանքի նպատակը

1. Զարգացնել նախագծային մեթոդով դասեր պլանավորելու և կազմակերպելու հմտությունները:

2. Կատարելագործել մեթոդների կիրառական հմտությունները:

3. Բարձրացնել ուսուցման և ուսումնառության որակը, դասապրոցեսը դարձնել հետաքրքիր, խթանել աշակերտին ինքնակայացման, ինքնակրթության, հետազոտական և ստեղծագործական գործունեության:

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետևյալ *խնդիրները*՝

- Ուսումնասիրել նախագծային դասեր պլանավորելու մեթոդական սկզբունքները և սկզբնաղբյուրներից վերցրած նախագծային դասերի պլաններ:
- Ստեղծել նախագծային դասի պլան:
- Կազմակերպել այդ պլանով դասեր՝ Հայաստանի աշխարհագրության դասընթացի գործնական դասի ժամանակ:
- Անցկացնել քննարկումներ դասի մասնակիցների հետ:
- Հետազոտել նախագծային մեթոդների կիրառման առավելությունները և թերությունները:
- Բացահայտել դասի պլանի հաջողված և չհաջողված կողմերը:
- Կատարել եզրակացություններ և առաջարկություններ:

Մեթոդաբանություն: Նախագծային *դասի պլաններ կազմելու, դրանցով դասեր կազմակերպելու, դասալսողների և մասնակիցների հետ քննարկումների միջոցով կատարելագործել դասի պլանը և զարգացնել նախագծային դասեր կազմակերպելու հմտությունները:*

1. Նախագծային մեթոդի մասին

Նախագիծ բառը բառարաններում բացատրվում է որպես ինչ-որ փաստաթղթի կամ մտահղացման նախնական բովանդակություն, ծրագիր:

Նախագծային ուսուցման կենտրոնական հասկացությունը նախագիծն է՝ սովորողի առջև դրված խնդրի լուծման մտահղացումը:

Նախագծային մեթոդը, խնդրի (տեխնոլոգիաների) մանրամասն մշակման միջոցով դիդակտիկ նպատակին հասնելու մեթոդ է, որը պետք է ավարտվի միանգամայն իրական, շոշափելի գործնական արդյունքով՝ ձևակերպված այս կամ այն ձևով (պրոֆ. Եվ. Ս. Պոլատ):

Այն սովորողների որոշակի գործողությունների հաջորդականությունների, հնարների համադրություն է, որոնց արդյունքում աշակերտը իրականացնում են տրված առաջադրանքը հասնում վերջնական արդյունքի:

Այլ կերպ ասած՝ նախագծային մեթոդն ուսումնական գործունեության ձև է, երբ սովորողներն անմիջականորեն ներառված են ակտիվ իմացական գործընթացում, ինքնուրույն ձևակերպում են ուսումնական խնդիրը, անհրաժեշտ տեղեկություններ հավաքում, մշակում խնդրի լուծման տարբերակները, վերլուծում աշխատանքի արդյունքները, կատարում եզրահանգումներ՝ ուսումնական կենսափորձ ձեռք բերելով: Այն ձևավորում է նախագծային մշակույթ կարողությունը, որը նյութական և հոգևոր ոլորտներում ինչ-որ նոր բան ստեղծելու ձգտումն է, և նախագծային մտածողություն:

Նախագծային մտածողությունը ստեղծագործական գիտական մտածողություն է նոր մտքերի ու գաղափարների ծագման փուլում, հետագա փուլերում ներգրավվում է նաև քննադատական մտածողությունը: Կրթությունը կոչված է ձևավորելու և զարգացնելու սովորողների նախագծային ստեղծագործական մտածողությունը: Լավագույն, սեփական լուծումը գտնելու ձգտումն ուսուցման հիմնական շարժառիթն է նախագծային կրթությունում:¹

Նախագծային ուսուցումը դասավանդողների ու սովորողների համատեղ կրթական գործունեությունն է, որը նպատակաուղղված է որևէ հիմնախնդրի տեսական կամ

¹ Нартова О.В., Инновационные технологии в образовании: проектная методика / Качество образования: системы, технологии, инновации: материалы международной научно-практической конференции. – Барнаул: Изд-во Алт ГТУ, 2007, С. 316-317

գործնական լուծմանը: Այն ակտիվ և հարցումների վրա հիմնված ուսուցում է, որը հակադրվում է ուսումնական նյութը սուկ անգիր անելու գործընթացին:

Նախագծային տեխնոլոգիայի հիմքում ընկած են սովորողի ճանաչողական, համագործակցային, հետազոտական հմտությունների, սեփական գիտելիքներն ինքնուրույն ձևակերպելու, փաստերը համադրելու, տեղեկատվական տարածքում կողմնորոշվելու, քննադատական մտածողության ձևավորումն ու զարգացումը: Այս դեպքում մանկավարժը ստանձնում է մշակողի, համակարգողի, փորձագետի և խորհրդատուի դերը:

Նշված մեթոդի հիմնական նպատակն է սովորողներին տալ հնարավորություն գործնական առաջադրանքների լուծման գործընթացում ինքնուրույն ձեռք բերելու գիտելիքներ: Նախագծային մեթոդի կիրառումը նպաստում է ծրագրային նյութի ընկալմանը, թույլ է տալիս բնականոն զարգացնել անհրաժեշտ ուսումնական ունակություններ, ձևավորել հաղորդակցային կարողություններ: Հատուկ պետք է նշել այս մեթոդի արդյունավետությունը սովորողների պատասխանատվության, ինքնուրույնության, խմբի հետ աշխատելու ունակության զարգացման գործում:

Նախագծերի մեթոդը միշտ ենթադրում է ինչ-որ հիմնախնդրի լուծում: Այն մի կողմից ենթադրում է ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառում, մյուս կողմից՝ տարբեր բնագավառներից ձեռք բերած գիտելիքների ստեղծագործական կիրառում, ասել է թե՛ միջառարկայական գիտելիքների ու կապերի ակտիվ օգտագործում:

Նախագծերի մեթոդը պահանջում է նաև, որ իրականացված հետազոտության արդյունքները շոշափելի լինեն, այսինքն՝ ստացվի կոնկրետ տեսական կամ էմպիրիկ արդյունք, որ կարող է օգտագործվել իրականության որևէ բնագավառում:

Պրակտիկան ցույց է տալիս, որ ինքնուրույն և լավ մոտիվացիայով ձեռք բերված գիտելիքը ամենադիմացկունն ու արդյունավետն է: Այն սովորողները, ովքեր սկզբից մինչև վերջ ավարտել են ինչ-որ լուրջ աշխատանք, լավ խթան են ստանում հետագա ուսումնառության համար, անցնում են կյանքի ինքնահաստատման հաջորդ փուլը: Ինչը և պայմանավորված է նախագծային մեթոդի առավելությունները այլ մեթոդների նկատմամբ: Քանի որ սովորողները տեսնում են, թե ինչպես են ձեռք բերված գիտելիքները գործնական կիրառություն գտնում, ինչը շատ ավելի արդյունավետ է դարձնում ուսուցման գործընթացը: Ստացված նախագծերը հստակ ցույց են տալիս այս մեթոդի բարձր արդյունավետությունը:

Չմոռանանք նաև, որ մարդը մշտապես կանգնած իր գործունեությունը ճիշտ ձևավորելու, իր աշխատանքը պլանավորելու՝ նախագծելու խնդրի առաջ: Այդ կարողությունը պետք է հատուկ արթնացնել, համակարգված զարգացնել և խնամքով մշակել ուսուցման ընթացքում:

Նախագծային մեթոդի պատմությունը

Նախագծային մեթոդը մանկավարժության մեջ կիրառվել է դեռևս 18-րդ դարում Եվրոպայում՝ ճարտարապետության և ճարտարագիտության դպրոցներում, երբ ավարտելուց հետո ուսանողները պետք է կիրառեին իրենց ձեռք բերած հմտություններն ու գիտելիքները և պետք է նախագծեին որոշակի շինության, կամ հուշարձանի նախագիծ:² Հետագայում այս բազմափուլ գործընթացը ներկայացվել է ամերիկացի փիլիսոփա և մանկավարժ Ջոն Դյուրիի և իր աշակերտ Վ.Խ.Կլիպատրիկի կողմից: Նրանք առաջարկում էին ուսուցումը կազմակերպել հաշվի առնելով սովորողի հետաքրքրությունները, նրա ակտիվ, ինքնուրույն, նպատակաուղղված անհատական կամ խմբային գործունեությունը, որի ընթացքում կարող է լուծվել որոշակի հիմնախնդիր: Ռուսաստանում այս մեթոդով աշխատել է Ս.Տ. Շատսկին: Հեղափոխությունից հետո 1931թվականին մեթոդը համարվել է խորհրդային դպրոցի համար անընդունելի և կիրառումը արգելվել է: 20-րդ դարի 80-ական թվականներին նոր միայն մասնակի կիրառություն է ունեցել խորհրդային դպրոցներում:

Անցյալ դարի 90-ական թվականներից նախագծային մեթոդը իր հիմնավոր տեղն է զբաղեցնում աշխարհի առաջատար երկրներում կիրառվող կրթական տեխնոլոգիաներում որպես ոչ ավանդական ուսուցման ձև, որը սովորողներին մղում է դեպի հետազոտական, ստեղծագործական գործունեության և հնարավորություն ընձեռնում որոշակի ինքնուրույն լուծումներ գտնելու համար: Դյուրիի գաղափարները լայն տարածում գտան ԱՄՆ-ում և Եվրոպական երկրներում:

Վերջին տարիներին նախագծային մեթոդը կիրառվում է նաև մեր կրթական միջավայրում և այն գնալով ավելի մեծ տեղ է տրվում գրավում այս մեթոդի կիրառմանը:

Գրավիչն այստեղ այն էր, որ մեթոդը զուգակցում էր տեսական գիտելիքները նրանց պրակտիկ կիրառության հետ, ապահովում էր սովորողների համատեղ գործունեությունը:

² Knoll, Michael (1997): The Project Method: Its Vocational Education origin and International Development. p.59-80):

Նախագծային գործունեության մեջ ներգրավված աշակերտը հասկանում է ինչ խնդիր է լուծում և դրա համար ինչ գիտելիքներ են իրեն անհրաժեշտ, աշխատանքային պրոցեսում նա հասկանում է նաև որտեղ և ինչպես պիտի կիրառի իր ձեռք բերած գիտելիքները: Մա գիտելիքների իմաստավորված յուրացումն է:

Նախագծային ուսուցման մեթոդը շատ ճկուն է և կարելի է կիրառելի սովորողների բոլոր տարիքային խմբերի և դասավանդվող բոլոր առարկաների դեպքում:

Նախագծի կազմակերպման և իրականացման ընթացքում կարևոր է հաշվի առնել սովորողի տարիքային առանձնահատկությունները, կարողությունները, քանի որ յուրաքանչյուր սովորող ունի իր հմտությունները, հնարավորությունների սահմանը: Յուրաքանչյուր նախագծի ավարտին սովորողը, իր կատարած աշխատանքի արդյունքը տեսնելով, մեծ ոգևորություն է ապրում, կիրառում իր պատրաստած իրը կենցաղում ձևավորելով իր անհատական ճաշակը, ցանկանում է տարբերվել շրջապատից և լինել առանձնահատուկ ու չկրկնվող:³

Նախագծային գործունեությունը դուրս է գալիս ուսումնական առարկայի սահմաններից և ընդգրկում է շրջակա աշխարհի այն ոլորտները, որոնք առավել հետաքրքրություն են ներկայացնում սովորողի համար:

Նախագծերի մեթոդը մի կողմից ենթադրում է ուսուցման տարբեր միջոցների ու մեթոդների կիրառում, մյուս կողմից՝ տարբեր բնագավառներից ձեռք բերած գիտելիքների ստեղծագործական կիրառում, ասել է թե՛ միջառարկայական գիտելիքների ու կապերի ակտիվ օգտագործում:

Սովորողի աշխատանքը ինքնին կարևոր է, և գնահատելի, թափած ջանքը ուշողության արժանի: Աշխատանքի ընթացքում են սովորում. նախագծային աշխատանքը հենց սովորելու գործնական հնարավորություն է: Հնարավորություն որը կարող է տանել նոր բացահայտումների որոնց արդյունքն է փաստարկված սեփական կարծիքը:

Նախագծային աշխատանքը թույլ է տալիս յուրաքանչյուր աշակերտի գիտելիքներն ու կարողությունները գնահատել համալիր կերպով: Նախագծային աշխատանքի ստեղծագործական հաշվետվությունը կարելի է համարել ամփոփիչ ատեստացիա (քննություն): Այդ դեպքում ուսուցիչը յուրաքանչյուր աշխատանքի համար գրախոսություն պետք է պատրաստի: Շնորհանդեսից հետո խիստ կարևոր է

³ Бурков В.Н., Как управлять проектами, Москва: Синтег, 1997, с.2

աշակերտների հետ քննարկել արդյունքները, նշել դրականը, քննարկել թերություններն ու նշել նախագծային աշխատանքների բարելավելու կապակցությամբ աշակերտների առաջարկները (ռեֆլեքսիայի սկզբունք):⁴

Նախագծերի տեսակները

Մանկավարժական պրակտիկայում նախագծերը դասակարգվում են հետևյալ կերպ .

Նախագծերի դասակարգումը: Ըստ մասնակիցների թվաքանակի նախագիծը կարող է անհատական, գույգերով, խմբային, կոլեկտիվ, մասսայական, իսկ ըստ ***բովանդակության*** լինում են մոնոնախագիծ (առարկայի սահմաններում) և միջառարկայական (երկու և ավելի առարկաների սահմաններում): Նախագծերը դասակարգվում են նաև ***ըստ տևողության***՝ լինելով մինիմալնախագիծ (մեկ դասաժամի համար), կարճաժամկետ (4-6 դասաժամի համար), միջնաժամկետ (1-4 շաբաթվա համար) և երկարաժամկետ (4 շաբաթից մինչև մեկ տարի):

Ըստ ***գործունեության տիպի***՝ առանձնացվում են տեղեկատվական, հետազոտական, ստեղծագործական և գործնական կողմնորոշման նախագծեր:

Նախագծերը կարող են լինել նաև ***հեռահաղորդակցական:*** Վերջինիս դեպքում սովորողների խումբը կարող է նախագծային աշխատանքն իրականացնել Համացանցում՝ գտնվելով տարբեր հարթակներում: Ընդ որում, ցանկացած նախագիծ կարող է ունենալ իր աշխատանքային ընթացքն արտացոլող կայքը՝ որի նպատակն է, որ բազմակողմանիորեն լուսաբանվի նախագծի ընթացքում իրականացվող ուսումնասիրությունների և ստացված արդյունքի ողջ ընթացքը:

Նախագծային աշխատանքը բաղկացած է չորս հիմնական փուլերից՝

1. Նախապատրաստական փուլ
2. Պլանավորման փուլ
3. Կազմակերպչական - հետազոտական փուլ
4. Արդյունքների ներկայացման փուլ

⁴ Лазарев В.С., Новое понимание метода проектов в образовании // Проблемы современного образования, 2011, №6, С. 35-43

Նախապատրաստական փուլն իր մեջ ներառում է ներքոհիշյալ քայլերը

- նախագծային խմբի ձևավորում,
- խմբերի ղեկավարների ընտրություն,
- թեմայի ընտրություն,
- նախագծի նպատակի, խնդիրների, ենթադրվող հիպոթեզների ձևավորում,
- ռազմավարության ընտրություն,
- նախնական պլանի մշակում,
- գրականության ուսումնասիրում:

Պլանավորման փուլն իր մեջ ներառում է

- ժամկետների որոշում
- հնարավոր արդյունքների քննարկում
- ուսումնական խնդիրների բաշխումը մասնակիցների միջև:
Կազմակերպչական - հետազոտական փուլ կազմված է հետևյալ հաջորդական քայլերից
- կազմվում է նախագծային աշխատանքների իրականացման հաջորդականությունը,
- տրվում են կոնկրետ հանձնարարություններ խմբի յուրաքանչյուր անդամին,
- հավաքվում և մշակվում է տեղեկատվությունը, պատրաստվում են
- եզրահանգումներ, որոնք համադրվում են դրված խնդիրների և ենթադրվող հիպոթեզների հետ,
- Ձևակերպվում են հետազոտության արդյունքները և պատրաստվում է ներկայացման (ձևաչափը ընտրում են սովորողները):

Արդյունքների ներկայացման փուլն իր մեջ ներառում է հետևյալ բաղկացուցիչ մասերը.

- նախագծի աշխատանքի շնորհանդես,
- նախագծի ընթացքում կատարված աշխատանքների քննարկում
- նախագծային աշխատանքների գնահատում ամբողջ խմբի և նրա յուրաքանչյուր անդամի համար:

Նախագծային ուսուցման վերջնարդյունքները: Նախագծային ուսուցումը սովորողի մոտ ձևավորում է կրթական նոր չափորոշչով սահմանված կարողունակություններ, ինչպիսիք են՝

1. դրսևորել տրամաբանական և ստեղծագործական մտածողություն, կարողանալ անդրադառնալ ու արձագանքել սեփական և ուրիշների ստեղծած աշխատանքին
2. հասկանալ իր առջև դրված խնդիրը, մշակել և կատարել քայլեր այն լուծելու համար.
3. համատեղ կամ ինքնուրույն իրականացնել պարզ հետազոտական աշխատանքներ, անել եզրակացություններ՝ հիմնվելով ստացված տվյալների և դիտարկումների վրա, փաստերն օգտագործել իր գաղափարները հիմնավորելու համար և ներկայացնել ստացված արդյունքը պարզ գիտական բառապաշարով.
4. կարևորել սովորելը և ցուցաբերել հետաքրքրություն սովորելու նկատմամբ.
5. ճանաչել տեղեկատվության աղբյուրների ու միջոցների բազմազանությունը.
6. ստեղծել ընկերական հարաբերություններ, լսել, հասկանալ, ապրումակցել, քաջալերել և աջակցել մյուսներին, համագործակցել տարբեր ձևաչափերով, դրսևորել դրական վերաբերմունք, ձգտել կոնֆլիկտների խաղաղ լուծմանը.
7. արտահայտել սեփական մտքերը, զգացմունքները, կարիքները և ցանկությունները, գիտակցել իր յուրահաստուկ լինելը.
8. ցուցաբերել հանդուրժողականություն, ապրումակցում և մարդասիրություն.
9. գտնել իր սխալները և քայլեր անել դրանք ինքնուրույն կամ աջակցությամբ ուղղելու համար.
10. կիրառել տեքստային և գրաֆիկական խմբագրիչները, այդ թվում՝ աջակցող տեխնոլոգիաներ, կարողանալ մշակել տվյալներ՝ օգտագործելով անհրաժեշտ թվային գործիքներ և ծրագրեր:

Նախագծի վրա աշխատանքը ներառում է ուսուցչի և աշակերտի որոշակի գործունեությունը, որը ըստ նախագծի փուլերի բաշխվում է հետևյալ կերպ.

1. Նախապատրաստում.

Աշխատանքի բովանդակությունը. նախագծի թեմայի և նպատակի որոշումը, հիմնախնդրի ներկայացումը: Սովորողների գործունեությունը. քննարկում են թեման ուսուցչի հետ և անհրաժեշտ լրացուցիչ տեղեկություններ ստանում, ապա՝ նպատակներ դնում:

- Ուսուցչի գործունեությունը. ծանոթացնում է սովորողներին նախագծային մեթոդի հիմաստին ու պատճառաբանում այդ մեթոդը, ինչն օգնում է նպատակադրմանը: Աշակերտներին տրվում է հանձնարարություն. լուծե՛ք խնդիրը՝ հիմքում դնելով համամոլորակային կամ տարածաշրջանային հիմնախնդիր: Որն էլ կկանխորոշի հետագա նախագծային աշխատանքները: Առաջ են քաշվեցին համապատասխան խնդիրներ, որոնց լուծման համար պահանջվում է ն՛ տեսական հիմնավորումներ և փորձնական հաստատումներ:

2. Պլանավորում.

Աշխատանքի բովանդակությունը. տեղեկությունների աղբյուրների որոշումը, արդյունքների ներկայացման եղանակները (հաշվետվության ձևերը), արդյունքների և գործընթացի գնահատման չափանիշների հաստատումը, թիմի անդամների միջև խնդիրների (պարտականությունների) բաշխումը:

- Սովորողների գործունեությունը. գործողության ծրագիր են մշակում ու խնդիրներ ձևակերպում:

- Ուսուցչի գործունեությունը. մտքեր է առաջարկում ու ենթադրություններ հայտնում: Պլանավորման փուլում ուսուցիչը կատարում է նախապատրաստական աշխատանք. աշակերտների գիտելիքների հիման վրա առաջնային գաղափարների առաջադրում, աշակերտների հակումների, հետաքրքրությունների և հնարավորությունների բացահայտում, նախագծերի թեմաների առաջադրում, վարկածների ու նպատակների ձևակերպում, պլանի մշակում, աշխատող խմբերի ձևավորում, նախագծի ղեկավարի ընտրություն: Կարևոր պահ է ռեսուրսային ապահովվածությունը՝ համակարգչային սարքավորումների, աուդիո, վիդեո, պատճենահանման տեխնիկայի տրամադրումը, գրադարանային սպասարկումը:

Մասնակիցների պարտավորությունների բաշխումը կատարում են իրե՛նք՝ աշակերտները, բաց քննարկմամբ: Ուսուցիչը նույնպես հայտնում է իր կարծիքը հավասարը հավասարի հետ սկզբունքով քննարկմանը մասնակցելով: Յուրաքանչյուր աշակերտի պարտականությունները որոշելիս պետք է հաշվի առնել նրա անձը, անհատական հակումները, հետաքրքրությունները: Խիստ կարևոր է հենց սկզբից հստակ սահմանել նախագծի յուրաքանչյուր մասնակցի խնդիրն ու կատարելու ժամկետը: Մենք կազմել էինք

մոտավոր ժամանակացույց, որում նշվել էին յուրաքանչյուր փուլի ավարտի ժամկետը և սպասվող արդյունքները:

3. Հետազոտություն.

Աշխատանքի բովանդակությունը. տեղեկությունների հավաքում, միջանկյալ խնդիրների լուծում, հետազոտության մեթոդին տիրապետում: Հիմնական միջոցները՝ հարցում, դիտում, փորձ:

- Սովորողների գործունեությունը. կատարում են հետազոտություն՝ միջանկյալ խնդիրներ լուծելով:

- Ուսուցչի գործունեությունը. Հետևում է, խորհրդակցում, անուղղակի ղեկավարում գործընթացը:

4. *Վերլուծական փուլի* ընթացքում աշակերտներն իրականացնում են տեղեկատվության որոնում ու հավաքագրում՝ գրականության աղբյուրները, զանգվածային լրատվական միջոցները, ինտերնետն օգտագործելով:

- Ուսուցիչն աշակերտների ուշադրությունը բևեռում է տեղեկատվության հավաքման այնպիսի մեթոդների, ինչպիսիք են դիտարկումը, անկետավորումը, սոցիոլոգիական հարցումը, փորձի իրականացումը: Գրականության հետ աշխատելու համար առաջին փուլում ուսուցիչը սովորեցնում է սեղմագրման սկզբունքները:

- Աշակերտները յուրացնում են տեղեկատվության հավաքման հմտությունը, զարգացնում են տեղեկատվությունը համեմատելու, դասակարգելու, վերլուծելու և սինթեզելու ընդունակությունը:

Կարելի է նաև խումբը բաժանել չորս ենթախմբի: Այդ ենթախմբերից առաջինը զբաղվում է գրականության վերաբերյալ ակնարկի պատրաստմամբ, երկրորդը՝ նախապատրաստվում և կատարում փորձնական մասը, երրորդը՝ զբաղվում նախագծի համակարգչային ներկայացմամբ, իսկ չորրորդը՝ դպրոցական համաժողովում զեկուցում կատարված աշխատանքի մասին:

5. Արդյունքների քննարկումը.

Աշխատանքի բովանդակությունը. Տեղեկությունների վերլուծություն, եզրակացությունների ձևակերպում:

- Սովորողների գործունեությունը. վերլուծում են հավաքած տեղեկությունները:

- Ուսուցչի գործունեությունը. դիտում է, խորհուրդ տալիս:

Ստացված տեղեկատվության մշակումն աշակերտներից պահանջվում է խոր ըմբռնում և իմաստավորում, փաստերի վերլուծություն և եզրակացություն անելու հմտություն, ստացված տվյալների համակարգում: Ընդ որում՝ մշակվում են փորձերի, սոցիոլոգիական հարցումների և անկետավորման արդյունքները:

6. Արդյունքների ներկայացումը (հաշվետվությունը).

Այս փուլում աշակերտներին նախագծի ներկայացման ձևի ընտրության մեջ առավելագույն ինքնուրույնություն է ընձեռվում:

Կատարվում է արդյունքների ներկայացում տարբեր ձևերով՝ բանավոր հաշվետվություն, բանավոր հաշվետվություն՝ նյութի ցուցադրմամբ, գրավոր հաշվետվություն:

- Սովորողները հաշվետվություն են տալիս, քննարկում հաշվետվությունները:

Սովորողը պիտի կարողանա.

- ներկայանալ և ներկայացնել
- համառոտ նկարագրել կատարված աշխատանքը. ինչ խնդիր են դրել, ինչպիսին է աշխատանքի արդյունքը, ինչու են ընտրել հենց այդ թեման, որն է նախագծի արդյունավետությունը
- խոսի նախագծի ընթացքում ծագած դժվարությունների կամ հակառակը՝ դյուրությամբ արված աշխատանքի մասին: Պիտի կարողանա հիմնավորել՝ աշխատանքի ընթացքում ինչն են համարում անարդյունավետ, իսկ ինչը՝ օգտակար:
- կոնկրետ ներկայացնողի համար որքանով է օգտակար այդ նախագծին մասնակցելը, ինչ սովորեց, ինչը ճշտեց, ինչ է կարողանում ավելի լավ անել աշխատանքը կատարելուց հետո, ինչը ինքը կկիրառի հետագայում:

- Ուսուցիչը լսում է և նպատակային հարցեր առաջարկում կամ ելույթ ունենում՝ որպես սովորական մասնակից:

Նախագծային գործունեության վերջնական արդյունքը ներկայացվում է զեկուցման, համակարգչային ներկայացման, ստենդային հոդվածի ձևով:

Արդյունքների ներկայացման փուլը ներառում է գնահատման պարամետրերի և չափորոշիչների որոշումը որին կարելի է մասնակից դարձնել աշակերտներին:

7. Արդյունքների և գործընթացի գնահատում.

- Սովորողների գործունեությունը. կոլեկտիվով քննարկում են գնահատականները, տալիս գործունեության ինքնագնահատում:

- Ուսուցչի գործունեությունը. գնահատում է սովորողների ջանքերը, նրանց կրեատիվությունը, տեղեկությունների աղբյուրների օգտագործման որակը, աշխատանքի շարունակականության հնարավոր լինելը, հաշվետվության որակը:

Շնորհանդեսից հետո խիստ կարևոր է աշակերտների հետ քննարկել արդյունքները, նշել դրականը, քննարկել թերություններն ու նշել նախագծային աշխատանքների բարելավելու առաջարկները:

Դասավանդողը սովորողների հետ միասին, նախագծերի արդյունքում, ուսումնական տարվա ընթացքում ստեղծում է ուսումնական նյութեր, առաջադրանքների և հարցաշարերի շտեմարան, ուղեցույցներ, ուսումնական մեդիափաթեթներ, ուսուցման այլ նյութեր, տեսանյութեր՝ դրանք հրապարակելով բլոգում, որպեսզի հասանելի լինի բոլորին:

Այսպիսով նախագծի հիմնական նպատակն է աշակերտին հնարավորություն տալ գործնական առաջադրանքի լուծման գործընթացում տարբեր աղբյուրներից ինաքնուրույն գիտելիքներ ձեռք բերել, դրանք համադրել, վերլուծել, ակտիվ մասնակցել ճանաչողական գործընթացին լուծելով ստեղծագործական, որոնողական խմբիներ, հայտնաբերել, բացահայտել գաղափարներ, ինչպես նաև իրենց անձնային ռեսուրսները՝ որոշակի կարողությունների ձևավորումը, որոնք ժամանակակից մանկավարժությունում անվանում են անձնային համալիր առանձնահատկություններ: Այն է՝ գիտելիքների, հմտությունների, արժեքների փոխկապակցում, ինչպես նաև համապատասխան իրավիճակում նրանց մոբիլիզացում և կիրառելու պատրաստակամություն:

-Նախագծային ուսուցման հիմնական նպատակներն են՝

1. Նպաստել յուրաքանչյուր մասնակցի ինքնագնահատականի բարձրացմանը և ներուժի բացահայտմանը:
2. Հնարավորություն ստեղծել, որ յուրաքանչյուրն իրեն տեսնի որպես ընդունակ և կարող անհատականություն:
3. Սովորողի մեջ զարգացնել ստեղծագործաան ունակությունները:
4. Սովորողի մեջ ձևավորել իրեն և մյուսներին ստույգ գնահատելու հմտություն:
5. Սովորողի մեջ զարգացնել համագործակցային հմտությունները:
6. Ձևավորել և ամրապնդել քննադական մտածողություն:

7. Զարգացնել սվորողների հետազոտական կարողությունները և վերլուծական մտածողությունը:

8. Մեղիագրագիտության զարգացում:

2. Գործնական համատեքստում նախագծային մեթոդի կիրառում

Նախապես պարզաբանվեց ինչ է նախագծային աշխատանքը և ինչպես պետք է այն կատարել: Որից հետո աշակերտների հետ միասին ընտրեցինք աշխատանքի թեման: Իրենց իսկ պնդմամբ ընտրվեց «Արցախի Հանրապետություն» թեման: Թեմայի ընտրությունը հաճելիորեն զարմացրեց ինձ, քանի որ չնայած 44 օրյա պատերազմի ցավալի կորուստներին ես ինչպես և իմ աշակերտները Արցախը համարում եմ մեր հայրենիքի անբաժան մասը: Հստակեցվեց աշխատանքի նպատակը՝ հնարավորություն տալ աշակերտներին ավելի լավ ճանաչել Արցախի հանրապետությանը, փորձել բացահայտել այս դժվարին ժամանակաշրջանում Արցախի տնտեսության հետագա զարգացման հնարավորությունները, նրա առջև ծառայած խնդիրները, փորձել գտնել դրանց լուծման ուղիներ և հնարավորությունները, զարգացնել հայրենաճանաչություն և հայրենասիրություն, հոգատարություն Արցախի բնության, պատմամշակութային հուշարձանների և այլ մշակութային արժեքների նկատմամբ, խթանել աշակերտի մատ ինքնուրույնության, ակտիվ գործունեության և նպատակասլացության զարգացումը :

Այնուհետև ձևավորեցինք աշխատանքային 4 խումբեր՝ կազմված 5 անդամներից:

1-ին խումբ՝ բնա-աշխարհագրագետներ՝ ովքեր պետ է ներկայացնեն Արցախի բնությունը (աշխարհագրական դիրքը, ջրագրությունը, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը, բնական հարստությունները և դրանց յուրացման և օգտագործման հետ կապված հիմնախնդիրները, առաջարկել լուծման ուղիներ)

2-րդ խումբ՝ պատմաբաններ՝ ովքեր պետ է ներկայացնեն Արցախի պատմությունը (արցախահայության հիմնախնդիրները, առաջարկել լուծման ուղիներ)

3-րդ խումբ՝ տնտեսագետներ՝ ովքեր պետ է ներկայացնեն Արցախի տնտեսությունը (հանքարդյունաբերություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ, բնակչություն դրանց զարգացման հետ կապված հիմնախնդիրները, առաջարկել լուծման ուղիները)

4-րդ խումբ՝ մշակութաբաններ՝ ովքեր պետ է ներկայացնեն Արցախի բազմադարյա մշակույթը (ճարտարապետություն, արհեստներ, մշակութային կենտրոններ, խոհանոց ... սրանց հետ կապված հիմնախնդիրները, առաջարկել լուծման ուղիները)

Յուրաքանչյուր խմբի հետ քննարկման արդյունքում որոշվեց խմբի կատարելիք աշխատանքը՝ նախագիծ և ուսումնասիրման ենթակա նյութը: Խմբերից յուրաքանչյուրն իր անդամներից ընտրեց ղեկավար՝ ով կղեկավարի խմբի աշխատանքն ամբողջ ընթացքում: Այնուհետև խմբերից յուրաքանչյուրի հետ փորձեցինք հստակեցնել խմբի առջև դրված խնդիրը ու մշակվեց կատարվելիք աշխարանքի պլան, հստակեցվեցին տեղեկությունների ստացման հնարավոր աղբյուրները՝ համացանց, գրականություն, լրատվամիջոցներ, ամիջական գրույց արցախահայության հետ...


Նախագիծ 1	Մովորողի աշխատանքը
<p>Նպատակը՝ բացահայտել Արցախի բնօգտագործման և բնապահպանական հիմնախնդիրները, գտնել դրանց լուծման ուղիներ:</p> <p>Ներկայացնեն՝ Արցախի բնությունը (աշխարհագրական դիրքը, ջրագրությունը, հողաբուսական ծածկը, կենդանական աշխարհը, բնական հարստությունները)</p>	<p>Աշխատանք ինքնուրույն, այնուհետև՝ խմբի հետ:</p> <p>Նախագիծը ներկայացնել բանավոր զեկույցով և սահիկահանդեսի տեսքով:</p>

Նախագիծ 2	Մովորողի աշխատանքը
<p>Նպատակը՝ բացահայտել Արցախահայության կյանքի և գոյության հիմնախնդիրները (անվտանգության, հաղորդակցության, բնակարանային, զբաղվածության) առաջարկել լուծման ուղիներ</p> <p>Ներկայացնել՝ Արցախի պատմությունը, Արցախի բնակչությունը</p>	<p>Աշխատանք ինքնուրույն, այնուհետև՝ խմբի հետ:</p> <p>Նախագիծը ներկայացնել բանավոր զեկույցով և սահիկահանդեսի տեսքով:</p>

	Նախագիծ 3	Սովորողի աշխատանքը
	<p>Նպատակը՝ բացահայտել Արցախի սնտեսության զարգացման հիմնախնդիրները, առաջարկել լուծման ուղիներ</p> <p>Ներկայացնել՝ Արցախի տնտեսությունը հանքարդյունաբերություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, տրանսպորտ)</p>	<p>Աշխատանք ինքնուրույն, այնուհետև՝ խմբի հետ:</p> <p>Նախագիծը ներկայացնել բանավոր զեկույցով և սահիկահանդեսի տեսքով</p>

	Նախագիծ 4	Սովորողի աշխատանքը
	<p>Նպատակը՝ բացահայտել Արցախի մշակութային զարգացման և հարուստ մշակութային արժեքների պահպանման հիմնախնդիրները, առաջարկել լուծման ուղիներ</p> <p>Ներկայացնել՝ Արցախի բազմադարյա մշակույթը (ճարտարապետություն, արհեստներ, մշակութային կենտրոններ, խոհանոց)</p>	<p>Աշխատանք ինքնուրույն, այնուհետև՝ խմբի հետ:</p> <p>Նախագիծը ներկայացնել բանավոր զեկույցով և սահիկահանդեսի տեսքով:</p>

Կատարվելիք աշխատանքի պլան-սխեմա



Որոշվեց աշխատանքի կատարման ժամկետները՝ ամբողջ աշխատանքին հակացվեց 3 շաբաթ ժամանակ: Կազմեցինք նաև ժամանակացույց որտեղ նշվեցին յուրաքանչյուր փուլի ավարտի ժամկետները, կատարվեց աշխատանքի բաշխում խմբի անդամների միջև՝ յուրաքանչյուրին հանձնարարվեց որոշակի կոնկրետ աշխատանք հաշվի առնելով նրանց անձնային առանձնահատկությունները:

Հաջորդ փուլում խմբերը գործեցին ինքնուրույն, անհրաժեշտության դեպքում խորհրդակցում են միմյանց և ինձ հետ: Յուրաքանչյուր փուլի ավարտը հետո խմբի ավագը ներկայացնում էր հաշվետվություն կատարած աշխատանքի վերաբերյալ: Պարզվեց, որ երեխաները կարողանում են վարպետորեն օգտվել համացանցից, որտեղից էլ ստացել էին տեղեկությունների հիմնական մասը: Այնուհետև խմբերն ինքնուրույն կազմակերպեցին ստացված տեղեկությունների քննարկում, համադրում, վերլուծում, հատկապես ակտիվ քննարկման առարկա դարձավ առջադրված խնդիրների լուծման

հեռանկարների և ուղիների որոնումը, որոնք հանգեցրին որոշակի եզրակացությունների: Կայացրած եզրակացությունների և որոշումների հիման վրա հետագայում պատրաստվեցին խմբերի կատարած աշխատանքի արդյունքների ներկայացում: Իրենց որոշմամբ աշխատաքը ներկայացվեց համապատասխան սահիկահանդեսի և բանավոր խոսքի՝ զեկույցի (հաշվետվությունը) միջոցով: Բավականին հեգաքքիթ էին աշակերտներն առաջ քաշված հիմնախնդրիները, որոք հիմնականում ներկայացված էին 44 օրյա պատերազմի հետևանքների համատեքստում, իսկ դրանց հնարավոր լուծումները հիմնականում կապում էին Արցախի անկախության ճանաչման հետ: Քննարկումները ավարտելուց հետո խմբերը ձևակերպում են հետազոտության արդյունքները և պատրաստվում ներկայացման: Աշխատանքները ավարտելուց հետո նշված օրը կազմակերպվեց կատարած աշխատանքի արդյունքների ներկայացում և գնահատում: Աշխատանքի գնահատմանը ինձ հետ միասին՝ մեկական ձայնի իրավունքով մասնակցեցին յուրաքանչյուր խմբից ընտրված մեկ անդամ: Կատարվեց քննարկում և գնահատում: Նախագիծը գնահատելիս օգտվեցինք կազմված գնահատման համապատասխան պարամետրերի աղյուսակից (գնահատման ռուբրիկ): Որը նախապես ներկայացվել և համաձայնեցվել էր աշակերտների հետ:

Գնահատման ռուբրիկ

Չափորոշիչներ	Միավորներ	Աշխատանքների արդյունքներ
Կողմում տեղեկատվության աղբյուրներում	1	Հավաքված է ամբողջ տեղեկատվությունը
	0,5	Հավաքված է քիչ տեղեկատվություն
	0,3	Տեղեկատվությունը թեմային չի առնչվում
Հատուկ հասկացությունների Կիրառումն ու ճիշտ օգտագործումը	1	Թեմայում լավ է կողմնորոշվում
	0,5	Միջին մակարդակ
	0,3	Ցածր մակարդակ
Դրված խնդրի լուծման ոչ ստանդարտ մոտեցումներ	1	Առկա են
	0,5	Բացակայում են
Աշխատանքի կատարման տեխնոլոգիականությունը	1	Աշխատանքի ժամկետները պահպանված են
	0,5	Աշխատանքի ժամկետները պահպանված չեն
	1	Կատարված է աշխատանքի վերլուծությունը
	0,3	Ներկայացված են նկարներ, ցուցապաստառներ
	1	Օգտագործված են տեխնիկական միջոցներ
Աշխատանքի հաշվետվության ձևակերպումը	1	Պահանջներին համապատասխանում է
	0,5	Պահանջներին չի համապատասխանում

Մուլտիմեդիաներկայացում	1	Աշխատանքի ձևակերպումը նպաստում է ըմբռնմանը
	0,5	Աշխատանքի ձևակերպումը շեղում է բուն բովանդակությունից
	1	Օգտագործված են տեխնիկական միջոցներ
Նախագծի պաշտպանությունը (բանավոր ելույթը)	0,5	Զեկուցումը կարդացվում է սեղմագրով
	1	Զեկուցումը կարդացվում է առանց սեղմագրի օգտագործման
	1	Կիրթ խոսքի տիրապետում
	0,3	Ոչ կիրթ զեկուցման շարադրանք
	1	Հարցերին հեշտ պատասխանելու կարողություն, Պատասխանների ճշգրտություն
	1	Ինքնատիրապետում, վստահություն, նյութի շարադրման հստակություն
	0,5	Ժամանակաչափի չպահպանում
	0	Նախագիծը պաշտպանելիս ոչ ճշգրիտ վարքագիծ

Գնահատվեցին սովորողների ջանքերը, տեղեկատվության աղբյուրներից օգտվելու հմտությունը, ստեղծագործական ունակությունները, աշխատանքի շարունակականության հնարավորությունը, կատարած աշխատանքը ներկայացնելու որակը: Թև բոլոր խմբերն էլ ներկայացրել էին բավականին մեծ և հետաքրքիր աշխատանք, կախն նաև բացթողումներ և թերություններ: Քննարկումների արդյունքում լավագույնը ճանաչվեց 2-րդ խմբի աշխատանքը:

Եզրակացություններ և առաջարկություններ

Նախագծային մեթոդով աշխատելու իմ փորձից ելնելով կարող եմ ասել, որ այն հետաքրքիր է, օգտակար, հեռանկարային: Աշխատանքը կատարելիս աշակերտները ցուցաբերեցին մեծ ակտիվություն, ինքնուրույնություն, հետաքրքրություն հանձնարարված աշխատանքի նկատմամբ, բարձր պատասխանատվություն, պատրաստակամություն, կազմակերպվածություն, քննարկումների ընթացքում ցուցաբերեցին կշռադատելու, սեփական տեսակետները և կարծիքները հստակ արտահայտելու կարողություն:

Ուսուցման այս եղանակի կիրառումը հնարավորություն տվեց արդյունավետ դարձնել ուսուցման գործընթացը:

Աշխատանքը հնարավորություն տվեց խթանել սովորողների հետաքրքրությունը կոնկրետ խնդիրների նկատմամբ, կանխատեսել այդ խնդիրների լուծումը նախագծային գործունեությամբ:

Այն հնարավորություն ընձեռեց զարգացնելու սովորողի ինքնուրույնությունը, ստեղծագործական կարողությունները, կապ ստեղծել ձեռք բերված գիտելիքների, կարողությունների և դրանց կիրառման միջև:

Նախագծային աշխատանքը հետաքրքիր է նաև նրանով, որ ընդհանուր գործ կատարելիս սովորողներն էլ ավելի մտերմացան, աշխատանքի ընթացքում օգնում էին միմյանց, իրար ուսումնասիրում-բացահայտում, իրարից սովորում, գնահատում «ընկերություն»՝ հասկանում են դրա առավելությունները: Այն նպաստեց համագործակցային պատասխանատվության առաջացած խնդիրների լուծման և սեփական դիտարկումներն իրականացնելու կարողությունների զարգացմանը, զարգացրեցին քննադատական և ռեֆլեկտոր մտածողություն:

Մի խոսքով՝ նախագծի վրա աշխատելու ընթացքում առավել ցայտուն են դառնում սովորողի անձնային որակները և ունակությունները:

Ներկայումս դպրոցում առկա են բոլոր հնարավորությունները սովորողների գործունեության հատուկ տեսակի՝ նախագծային մտածողության զարգացման համար,

ուստի առաջարկում եմ նախագծային աշխատանքներ կազմակերպել նաև այլ թեմաներ ուսուցանելիս: Սակայն կազմակերպելիս կարևոր է հաշվի առնել սովորողների տարիքային առանձնահատկությունները, հետաքրքրություններ, պատրաստվածությունը, SՅՏ հմտությունները:

Սակայն նախագծային մեթոդը կիրառելիս անհրաժեշտ է հիշել, որ այս մեթոդը դասընթացի ողջ ծավալը չի կարող ներառել, քանի որ այն երկար ժամանակ է պահանջում, շատ աշխատատար է: Այն հնարավորություն չի տալիս սովորողներին համակարգված գիտելիքներ ձեռք բերել կոնկրետ առարկաներից: Այն ընդամենը սովորողներին անհրաժեշտ մի շաք ինտելեկտուալ ու անձնային որակներ ձևավորող ու զարգացնող լրացուցիչ մեթոդ է և նախագծային ուսուցումն առավելագույնս արդյունավետ է որպես արդիական ուսուցման մեթոդների խիստ կարևոր լրացում:

Այն կարել է կիրառել և գնահատել որպես թեմայի, կամ դասընթացի ավարտի ամփոփիչ աշխատանք, քանի որ այս դեպքում առավել ցայտուն են դրսևորվում սովորողի ունակությունները:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ աշխարհագրության ուսուցումը հանրակրթական դպրոցում կարող է ունենալ բարձր արդյունավետություն, եթե ուսուցման ավանդական մեթոդները զուգորդվում են ակտիվ մեթոդական հնարներով՝ այս դեպքում նախագծային մեթոդով, քանի որ հաշվի առնելով ժամանակակից սովորողների պահանջմունքները, կարծում եմ, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը, անհատական կամ խմբային եղանակով պետք է հետազոտեն, պրպտեն, տեղեկություններ հավաքեն դասի թեմայի շուրջ, բանակցեն, ներկայացնեն ու ինքնադրսևորվեն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Бурков, В.Н. Как управлять проектами, Москва: Синтег, 1997.
2. Дьюи, Дж. Введение в философию воспитания, М.: Госиздат, 1921.
3. Лазарев В.С., Новое понимание метода проектов в образовании // Проблемы современного образования, 2011, №6.
4. Нартова О.В., Инновационные технологии в образовании: проектная методика / Качество образования: системы, технологии, инновации: материалы международной научно-практической конференции. –Барнаул: Изд-во АлгГТУ, 2007.
5. Ն.Ռաֆայելյան, Լ.Միլիտոսյան <<Նախագծի մեթոդը՝ որպես միջառարկայական ինտեգրման միջոց>> Տիգրան Մեծ, Երևան 2005.
6. Ս.Նավասարդյան, Լ.Սահակյան <<Նախագծի մեթոդը՝ որպես սովորողների ստեղծագործական մտածողության զարգացման միջոց>> ՀՀ ԿԳՆ, ԿԱԻ Մանկավարժություն 2008/1-2
7. Ն.Մովսիսյան Ուսուցման նախագծային մեթոդ Մանկավարժական հանդես 2013թ.
8. Ե.Սարգսյան, << Նախագծը ուսուցման արդյունավետ միջոց>> Ա.Գասպարյան, Գ.Պողոսյան <<Կրթական նախագծային տեխնոլոգիա>>, Երևան 2015
9. <https://podarilove.ru/hy/metod-proektov-v-obrazovanii-cto-takoe-metod-proektov/>
10. <https://muegn.ru/hy/technical-means/cto-takoe-metod-proekta-v-shkole-metod-proektov-primenienie-v-shkole-v-oblasti.html>
11. <https://anahitmejlumyan.wordpress.com/2013/08/20/%D5%B6%D5%A1%D5%AD%D5%A1%D5%A3%D5%AE%D5%A5%D6%80/>
12. <https://dpir.mskh.am/hy/node/533>
13. <https://muegn.ru/hy/technical-means/cto-takoe-metod-proekta-v-shkole-metod-proektov-primenienie-v-shkole-v-oblasti.html>
14. <https://podarilove.ru/hy/metod-proektov-v-obrazovanii-cto-takoe-metod-proektov/>
15. <https://college.eiu.am/project-based/>
16. http://publishing.yzu.am/files/Sovoroghi_Inqnuruynutyanyan_ev_masnagitakan_inqnoroshman_hogebanakan_gnahatum.pdf